ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ
(Նուէր բոլոր հայերին)

—

Հայ տառերի գիւտի և տպագրութեան կուլտուրական ազգային յօբելեան... փառահեղ տօնակատարութիւն... 250 ներկայացուցիչներ զանազան վայրերից եկած... 400 հեռագիրներ... շնորհաւորութիւններ ռուսներից, վրացիներից, յոյներից, Թուրքերից, կաթոլիկ և բողոքական հիմնարկութիւններից...

Փառաւոր հոգեհանգիստ...

Փառաւոր քարոզներ, ճառեր, դասախօսութիւններ...

Փառաւոր ճաշկերոյթ...

Յետոյ...

Յետոյ «պատգամաւորները մեկնեցին էջմիածնից»։

«Յօգուտ դպրոցական ֆոնդի՝ ի յաւերժացումն համազգային յօբելեանի, ստացված տեղեկութիւնների համաձայն, կը հանգանակվի մօտ կէս միլիոն ռուբլի» *)։

— Մօտ կէս միլիոն ռուբլի... ի յաւերժացումն համազգային յօբելեանի...

Ես սխալ չը կարդացի։ Այդպէս էր գրված՝ մօտ... կէս միլիոն ռուբլի... ի յաւերժացումն համազգային յօբելեանի...

Երա՞զ է դա, մի ցնորք թէ մեր իրականութիւնը։

Եւ... պատգամաւորները մեկնեցին էջմիածնից։

Արդեօք իրանց պարտքը կատարա՞ծ համարելով...

Եկան հեռաւոր տեղերից, տեսան իրար, խօսեցին, կարդացին, կերան, ստացան վեհի օրհնութիւնը և... մեկնեցին, հանգստացած

*) Տես «Մշակ» № 228.